

## ԽԱՇԻԿ ԲԱՐԻԿՑԱՆ

### ԳԵՎՈՐԳՅԱՆ ԺԵՄԱՐԱՍԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(ԾԱՇՆՅԱՆ 130 և մահվան 65-ամյակի առթիվ)

«Սողոմոն, նախախնամութեան ընծան եղաւ՝ Սուրբ  
Էջմիածնին: Կոմիտաս Վարդապետ Սուրբ Էջմիածնի  
ընծան հանդիսացաւ՝ հայ ժողովուրդին»:

(Ամենայն Հայոց Կաթողիկոս  
Վազգեն Առաքինի կոնդակից)

Հայ ժողովուրդի ու Արա մշակույթի պատմության մեջ Կոմիտասն իր կայուն ու մշտական տեղն ունի իրեն ազգային երաժշտական արվեստի չգերազանցված գիտակ, բնատուր ու բազմաշնորհ երաժիշտ, մեծատաղամդ կոմպոզիտոր, խորին ու պրատող գիտնական, հրաշալի հրապարակախոս ու ճարտասան, էությամբ ու ծնունդով՝ մամկավարժ, տաղանդավոր բանահավաք ու ազգագրագետ, նաև բանաստեղ:

Ու Կոմիտասը եղավ հայ երգի առաջյան ու այդ երգի հովիվը. շրջեց հայրենի զյուղերը, մտավ «մթնում կորած խրճիթները», տեսավ այդ խրճիթների ամենապոլվ ու պատերը, լսեց ու գրի առավ հազարամյա ու հազարավոր գորհարները: Կոմիտասի համճարը թափանցեց շինակամի երգերի անհատնում խորքերը, ընկալերով նրանց ոգին ու շունչը՝ առավել իմաստավորեց դրանք, զտեց ու մաքրեց, ուկեզօծեց ու բյուրեղացրեց և հիբր տաղ երկնարժան Առրիջ շինակամի վերաբերեց:

«Խաղ կանչող մեծ վարդապետոը» (այդպես էին Արան կանչում շինակամները) իր աստվածաշնորհ տաղանդով Ալազյազի ու Արարատի բարձունքների վրա, Լոռու սարերի ու Սիկիանի ձյունապատ գագաթների վրա կյանք առած երգերը հավաքեց և, դաշնակերով, նրանց տվեց դասական երաժշտության վայելչություն:

## ԾՆՈՒՆԴ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հազար ութ հարյուր վաթսուհինն թվին

Հայոց ալգիներն ի՞նչ պտուղ տվին...

Այդ նույն թվականի սեպտեմբերի 26-ին երգի ու երաժշտության մեջ սիրահար, զվարճախոս ու կատակարան, նեռավոր Անատոլիու Քյոթահիա (Կոտինա) զեղաշուր քաղաքի Ս. Թագենոս նկատեցու երգիշ դասի ձայնեղ կոչկակար Գևորգ Սողոմոնյանի նորաստեղծ ընտանիքում ծնվեց անդրամիկ և միակ զավակը, որին երեք օր նետո մկրտեցին նույն նկատեցում առաքելական ծեսով և անոնք Սողոմոն կմքնցին: Կմքահայրը նորեղաբան էր՝ նույն նկատեցու երգիշ, դայիր Հարություն Սողոմոննանը, իսկ մկրտող քահանան՝ Տեր Ղազարոսը:

Սողոմոնի մայրը՝ Արրակազմ ու զեղեցիկ Թագուհին, հրաշալի ձայնով ու նազելի պարով, 17-ամյա գորգազործ էր. նա դեռ չէր հասցրել մանկան նիշն ու քաղցրությունը վայելել:

Բարեհիրու ու որդեսներ Գևորգն իր որդու համար նաև մայրություն արեց. երեխայի հիմնական խնամքը մնաց հայրական տատի՝ ամշափ քարի ու հոգատար Մարիամի վրա, որի մասին հետազոտում կոմիտասը գրում է. «Եղել է ինձ համար երկրորդ մայր, ինչ ապագայի համար լուրջ նոց տանող»:

Կոմիտասի նախնաները սերվել են Մեծ Հայքի Վասպորական աշխարհի Գողթան զավատից, որի ալեքնործ, երկրագործ, շերամապահ, արթևատազորդ ու անապահ հայրերը, Մովսես Խորենացու վկայությամբ, եղել են նաև երգասներ ու երգաստեղծներ: Հեթանոս պապերի այս շնորհը ժառանգել են նաև կոմիտասի ծնողները, նրամնցից է՝ իրենց որդին:

Եթե բոլորում է մանկան լոր տարին, ուսման արժեքը բարձր զմանատող հայրը Սողոմոնին ստվորելու է տալիս իրենց քաղաքի ազգային շրուդավան վարժարանում:

Դպրոցը բարձր զմանատականներով պարտած Սողոմոնը նորը դնում է հոգսների տակ. ի՞նչ անել... իր նման կոչկակար՝ դարձնել. տղան մեղք էր՝ ստվորել էր ուզում: Իրենց քաղաքում պվեխի բարձր վարժարան չկար, ինըն էլ միշոցներ չուներ, որ որդուն Պողիս ուղարկեր: Հայրը ընտրում է աներոշ զուտի՝ Բուրսայի տարբերակը, որը և՛ մոտ էր, և՛ տղան ապրելու տեղ կունենար: Եվ նայր ու որդի ուղևորվում են այդ փոքրիկ, կիսով չափ հայաբնակ քաղաք: Հայրը տղային թռնում է աներոշ տանը և խոստանում հաճախակի այցի զալ. ի՞նչ իմանար ինեղ հայրը, որ խոստումը չպետք է կարողանար կատարել:

Դժվար օրեր են սկսվում որբուկի համար. նա սկսում է թափառել տնից տուն, թաղից թաղ, շվի է փշում, երգում, պարում իր միջանց հորաքրոջ համար մի կտոր հաց վաստակելու համար: Քաղցած ու արտասվախան մանչուկիմ «փողոցների բափառական փոքրիկ երգչին» (այդպես էին նրան կոչում Քյոթահիայի շատ բնակչիշներ), հաճախ էին տեսնում բարուտների պատերի տակ կուշ եկած, քաղցը հազեցնելու համար ունենորների՝ շների, կատուների ու հավերի համար դուրս թափած ուտելիքների մնացողները քուչուզ անելիս: Քիչ չի պատամել, որ ծանութերը նրան գտել են խանութների դռների ու լվացքատների մի քիչ տաքուկ սպիրատակների վրա բնած. արթնացրել ու տուն են ուղարկել:

Ու Սողոմոնի ճակատազիրը պիտի մնար այսպես անորոշ, ապրած օրերը՝ տիտոր ու թափառ, եթե երջանիկ պատահականությունը չիմաստավորեր նրա մետագա կյանքը:

## ՈՒ ԺԵՄԱՐԱՆ՝ ՄՏՔԻ ԿԱԺԱՌ

Գևորգ Դ մեծազործ Կաթողիկոսը 1874-ին իր հիմնած Հոգևոր ճեմարանում սովորելու համար հատուկ կոնդակով Թուրքիայի և Պարսկաստանի հայաբնակ տարածքներից որք ու կարիքավոր 30 ձայնեղ տղաներ է պահանջում: Բախտող ժառուս է նաև Ս. Թաղենու եկեղեցու 20 տղաներից ամենաքաղցր ու հնչեղ ձայն ունեցող Սողոմոնին:

Գևորգ Դ Կաթողիկոսի առաջ կամզմած է տասերկուամյա գումար պատաճին՝ ծղոտի պես բարալիկ, թոշունի պես երկուո՞ւ տաճկական կարմիր հալավով, պոչավոր մաշված սոլերով: Վեհափառի հարցերին մանջուկը չպատասխանեց՝ հայերեն չգիտեր: Ու Կաթողիկոսի՝ տաճկերեն տված այլ հարցին, թե որ հայերեն չգիտե, Է ո՞ւր է եկել, նա, զգալով Վեհի բարի հայացքը, մի կերպ պատասխանում է.

- Չգիտեմ, դրա համար էլ ինձ բերել են, որ հայերեն սովորեմ:

Տղայի տրամաբանված պատասխանը դուր է գալիս Կաթողիկոսին, ու նրա այն հարցին, թե տղան երգել գիտե՞».

Եվ տղան սկսեց... թուրքերեն երգել...

Բառերը եղուկ... Զայնը՝ գուլալ...

Իսկ երբ թուրքերեն երգին հաջորդում է «Լուս զվարթը» և ևս երկու շարական, ու երբ Վեհարանը լցվեց մանկական զրնուն ձայնի մաքուր ու չինչ դայլալներով, Վեհափառի աշերից արցունքներ գորվեցին, և նա կարգադրեց տղային ճեմարան ընդունել՝ իբրև եզակի մի բացառություն:

Տարբեր երկրներից ու զավաներից ճեմարանում սովորելու եկած տղաներն իրենց հետ բերում էին ճակատագրի բերումով աշխարհով մեկ ցիրուցան եղած հայերի ավամդութեան ու սովորությունները, երգերն ու պարերը, իրենց պապենական ֆոլկլորը: Նա խնդրում էր ընկերներին իրենց իմացած երգերն ու պարեղանակները, նաև ֆոլկլորը գրի առնել ու հանձնել իրեն: Ամոնան արձակուրդ գնացող իր դաշնակերներին պարտադրում էր վերադառնալ տեղական երգերը գրի առած: Մ. Արեւյանի պատմելով, նրա հավաքած և սեփական ձեռքերու գրի առած երգերի ու պարեղանակների տարբերակների թիվը ամեցել էր 25 հազարից: Այդ տարիներին էր, որ Սողոմոնը «Լո-լո-լո» մեղեդու և Մ. Արեւյանի գրած տեքստով ստեղծում է հրաշալի «Սիփանա քաջեր» երգը, որը դառնում է ճեմարանի ուսանության քայլերզը, տարածվում նաև Ծուշիում և անցնում Եվրոպա:

1890 թ. հունիսին Սողոմոնը ձեռնադրվում է սարկավագ:

## ԱՆՁՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ

Կոմիտաս Վարդապետի անձնական նկարագրի ու բնավորության գծերի մասին պատմել ու հուշեր են գրել իր ուսանողական ու աշխատանքային ընկերներից շա-

տերը: Գարեգին Լևոնյանը՝ Զիվանու ավագ որդին, որը Կոմիտասի հետ հիմնադրել է «Գեղարվեստ» ազգագրական համեստը, հինգ տարի աշխատել է նրա հետ և իր հուշերում ներկայացնում է աշխատանքային ընկերությը. «Միջամասակ, պիհար, շուտ և զգայում, դեմքը՝ դեղնավում, աչքերը՝ արտաթալտիչ և վառվուն, զույգը՝ ճաղատ, մորուքը՝ ոչ վարդապետավայրել, այլ ծնուտի տակ միայն թողած, այսպես կոչված վազքներյան, ինքը՝ արագաքայլ և անհամբեր. միշտ շտապոր, միշտ անհամբեր, միշտ աշխատաներ, կանքից գոհ, լավատես»:

Սողոմոնի կննցաղավարության մասին նույնպես հիտարքրական տեղեկություններ է հողորդում Լևոնյանը:

1892 թ. մայիսի 5-ին Մայր Աթոռում մեծ նոուգեն էր. Կատարվում էր Հայ Եկեղեցու 125-րդ Կաթողիկոսի ընտրությունը, և իր բացակայությամբ կաթողիկոս է ընտրվում հայ ժողովորի մեծ երախտավոր, հասարակական, քաղաքական ու կրթական խոշորագույն գործիչ, ներքում մտավորական ու բնաշխարհիկ գրող 72-ամյա Մկրտիչ Խորիմյանը, որին ժողովուրդը մեծարել է Հայոց Հայրիկ պատվանունով: Ամենայն Հայոց Հայրիկն առաջին իսկ ծանոթությունից սիրեց Սողոմոն սարկավագին, գերվեց նրա ձայնով, տարվեց նրա կատարած երգերով՝ «Ճամ մը չէր այն, հոգի մըն էր», և այդ ժամանակվածից էլ Սողոմոնը դառնուած է Խորիմյանների ընտանիքի ամենապատվագոր անդամը. Առ երածշտության դասեր է տալիս Հայրիկի եղբորորդու՝ Խորենի աղջիկներին՝ Կարինենին ու Մերինենին: Խորիմյանը, որպես իր ճանապարհի ընկեր և զավագանակիր, իր հետ միշտ վերցնում էր «Բայոց սոխակին». Նրանք միասին եղել են Թիֆլիսում, Շիրակում և այլուր:

## ԱՎԱՐՏՈՒՄ ԵՎ ԶԵՐՈՒԱԴՐՈՒՄ

1893 թ. ավարտելով ճեմարանը՝ Կաթողիկոս Մկրտիչ Խորիմյանի հրամանով ճեմարանի երգեցողության ուսուցիչ Կարա Մուրզայի փոխարեն ճշանակվում է Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը: Ստանձնելով ճեմարանի երգեցողության ուսուցչի և երգչախմբի ղեկավարի պարտականությունները՝ Սողոմոն սարկավագը շանք ու եռանդ չխնայեց իմանովին վերակառուցելու ճեմարանում դասավանդվող երգչերածշտության դրվագը. Առ զորացնում է երգչախումը՝ նրան վարժեցնելով քառաձյան կատարողական արվեստին, մի բան, որին հոգևորական դասը դեմ էր՝ երգի բազմաձայն կատարումը անհարիդ համարելով եկեղեցուն՝ պատճառարանելով, թե միաստվածությունը պետք է փառարանվի մեկ ճայնով: Սողոմոնը ոչ միայն իիմք դրեց բազմաձայնությանը (աղոյիփոնիային), այլև երգչախմբին կից ստեղծեց նաև ժողովրդական գործիքների նվազախումը, որը հետազոտում մեծապես նպաստեց ավելի լայն ծավալի և դասական ստեղծագործությունների կատարմանը:

1894 թ. սեպտեմբերի 11-ին ավագ սարկավագ Սողոմոն Սողոմոնյանը ձեռնադրվում է արելա և աճվաճակոչվում 7-րդ դարի ճշանավոր Կաթողիկոս՝ աճվաճի գիտնականի, երգահանի ու հրաշալի երգիչ ԿՈՄԻՏԱՍԻ անունով:



**ԿՈՄԻՏԱՍԻ ՎԱՐԴԱԿԵՏ**

1895 թ. փետրվարի 26-ին Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հատուկ հրամանով Ա. Աստվածածին եկեղեցում Կոմիտասին շնորհվում է վարդապետական աստիճան և գավազան:

## ԱՌԱՋԻՆ Ա.38Ը ԹԻՖԼԻՍ

Ամբողջ Էռոթյամբ, նոզով ու սրտով և բնության նախախնամությամբ երաժիշտ ծաված Կոմիտասը չէր կարող բավարարվել Էջմիածնում ստացած երաժշտական գիտելիքներով. նա ձգուում էր համել երաժշտական արվեստի բարձունքներին: Այդ նպատակով նա խորհրդակցում է իր կիրելի Վեհափառի հետ: Վեհը խրախուսում է: Արա ձգուունները և խորհրդու տալիս նախ մեկնել Թիֆլիս, մի որոշ ժամանակ սովորել Պատերությի Կոնսերվատորիան ավարտած Մակար Եկմալյանի մոտ, մինչև ինը կրանակցի ազգային մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշլյանցի հետ՝ Բեղոյնում սովորելու նյութական միջոցներ ստանալու համար:

Եվ 1895 թ. Բնկունքներին, երաժշտական կրթության մեջ խորանալու նպատակով, Կոմիտասը մեկնում է Թիֆլիս: Ցոյք ամիս նա աշակերտում է Եկմալյանի՛ ըմբոշխնելով նրա բոլոր գիտելիքները: Եկմալյանը զարմանում է իր սանի արտասովոր ընդունակությունների և երաժշտական խորիմացության վրա: Ուսուցիչը համոզվում է, որ իր սանին այլևս տալու բան չունի, որ Կոմիտասի նամակ երաժշտին պետք է դասավանդնեն ավելի մեծ ու հնուտ երաժիշտներ, որ նրա տեղը միայն Բեղոյնը է՝ իր նշանավոր կոնսերվատորիայով ու Բնչակավոր երաժիշտներով:

Վերադարձած Էջմիածնին, Խրիմյան Հայրիկից տեղեկանում է, որ ազգային մեծ բարերար Մանթաշլյանց համաձայնել է իր միջոցներով Կոմիտաս վարդապետին երեք տարով Բեղոյն ուղարկել՝ երաժշտական բարձրագույն կորթություն ստանալու:

## ԲԵՇՈՒՆ. 1896. ՀՈՒՆԻՍ. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Իր հանձնարարականներով 27-ամյա Կոմիտասը ներկայանում է Արքայական կոնսերվատորիայի ունկուոր, աշխարհաբոչակ շութականար ու կոմպոզիտոր Յոզեֆ Ռուխիմիին: Անվանի երաժիշտը գերմանացու սառնությամբ ընտառ է պայծառ աշքերով իրեն նայող և պատասխաններով հավատ ներշնչող, ձայնային արտակար հնարավորություններ, նրանուր լսողություն և երաժշտական փայլում ընդունակություններ ունեցող ասիացի երիտասարդին և նրան գրանցում կոնսերվատորիայի առաջին կուրսեցիների ցուցակում վեց տարվա ուսումնառությամբ: Քանի որ Կոմիտասը միայն ենք տարվա ուսման վարձի և Բեղոյնում ապրելու ծախքերի հնարավորությամբ էր եկել, ունկուորը նրան խորհրդու է տալիս խորացված ծրագրով ուսանել և միաժամանակ սովորել հայտնի երաժիշտ-մանկավարժ պրոֆեսոր Ռիխսարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում համատեղ սովորելով նաև եկեղեցական երաժշտության ճեմարանում իբրև ազատ ունկնդիր:

«Ուսուցիչ փորձեց ձայնս և որոշեց, որ նև բարիտոն եմ, որ ամբողջովին ամփոփում է բարձր տենորի ու ստորին բարիտոնի ամբողջ տարածությունը», - զրում է Կոմիտասը ճեմարանի տեսուց Կարապետ Կոստանդնացին: Միաժամանակ Շմիդտը հայտնում է, որ «Կոմիտասի ձայնի մեջ ձուլված է համազումարը թէ՝ տենորի եկունության և թէ՝ բարիտոնի փափկության»:

## ԿՈՄԻՏԱՍԻ ԴԵԲՅՈՒՏՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

1899 թ. մայիսի 10-ին, երեկոյան ժամը 8-ին կայացած Միջազգային երաժշտության ընկերության երկրորդ հիմնում, որին մասնակցում էին աշխարհահնչակ երաժիշտներ, «Հայոց եկեղեցական և աշխարհիկ երաժշտությունը» թեմայով գեկուցում է կարդում Զաք ընկերության անդամ Կոմիտաս Վարդապետը: Բեղյանան երեք բնույն տարիների հայուտն ու բովոնդակալից կյանքը, երաժշտության տեսության ու կատարողական արվեստի մնջ խորացած, գերմաներենին հմտորեն տիրապետող և հոնետորական արվեստի անուրանալի ձիրք ունեցող երեսնամյա փորձված երաժշտի ու բանախոսի համար դժվար չէր Գիտաժողովի հարյուրավոր երաժշտներով համոզել և իր գեկուցման ըլույզը քառաձայն երգչախմբի հմուտ կատարումներով ապացուցել, որ հայն ունի իր սեփական երաժշտությունը, որ նրա ունեցածը ասորաբյուզանդական կամ հնդկապարսկական խառնուրդ չէ, ինչպես կարծում էին օտար (և ոչ միայն օտար) երաժշտներն ու հոգևորականները: Կոմիտասի գեկուցումը հաճախ ընդմիջվում էր կատարվող երգերով. ըստ որում կատարվում են նաև քրդական, պարսկական և տաճկական երգեր, որոնցով Կոմիտասը ցույց է տալիս դրանց և հայկական երգերի միջև եղած տարրերությունները: Այս գեկուցում-համերգով Կոմիտասն ընդգծեց հատկապես այն միտքը, թե «հայկական երաժշտությունն այնքան ինքնուրուցն ու հարազատ է իր ժողովրդին, որչափ նրա՝ դարերի խորքից եկած լեզուն ու գրականությունը, որովհետև յուրաքանչյուր ազգի երաժշտություն տվյալ ազգի հնչյունական եկանքներից է սպառում»:

Դասախոսություն-համերգին ներկա եղած Բեղյանի Օպերային թատրոնի տնօրինը, Բիհացած Կոմիտասի ձայնով, նրան առաջարկում է մեծ հոնորարով աշխատել իր Օպերային թատրոնում որպես մենակատար: Բայց հայրենասեր երաժշտությունն այնքան ինքնուրուցն ու հարազատ է իր ժողովրդի հանդեպ, պետք է վերադառնա Հոգևոր ճեմարան և իր նման երաժշտներ պատրաստի: Այս մասին Կոմիտասը պատմել է իր մտերիմ ընկեր Հրաչյա Աճառյանին:

Այս նույն դասախոսություն-համերգներն ունկանիրների խնդրանքով կրկնվում է հունիսի 24-ին Բեղյանի Ծարվենիայի երաժշտանոցի դարիխնում:

Այս երկու դասախոսություն-համերգների վերաբերյալ ժամանակի գերմանական ու ֆրանսիական մամուլը բազմաթիվ դրվագական ու հիացական հոդվածներ է տպագրում այն համարելով սովորական բուռնական համարանք չէր եղած ոչ Բեղյանում և ոչ էլ Փարիզում:

1899 թ. օգոստոսի 20-ին Կոմիտասը «Բրդական երաժշտությունը» դիպումային աշխատանքի պաշտպանությամբ ավարտում է համալսարանը և նոյն օրը ստանում Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիան ավարտելու վկայական:

## ՎԵՐԱԴԱՐՁ. ՀԱՅՐԵՆԻՔ

1899-ի սեպտեմբերին Կոմիտասն իր հայրենիքում էր: «Նա Բեռլինից դաշնամուր էր թրել Խոհմանի եղբոր թոռնիկների համար:

Ընմարանում Կոմիտասը ձեռնամում է լինում մեծ կտավի ստեղծագործությունների: Նա Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» համար երաժշտություն է գրում և Հրաչյա Աճառյանի հետ գործը թմադրում Ընմարանի ուսանողների միջցոցով: Մ. Արենյանը խատացել էր «Սասմա ծոկրի» համար լեռքնու գրել, Կոմիտասը սկսել էր աշխատել երաժշտության վրա. միաժամանակ ուսչիտափիկներ (ասերգեր) էր գրում «Կարմիր Վարդան» օպերայի համար, բայց ավելի նույնուն աշխատում էր «Անուշ» օպերայի վրա: Այդ նպատակով էլ նա մեկնում է Թիֆլիս՝ Թումանյանի հետ խորմրդակցելու:

Նա Ընմարանում իր սաներով հատվածներ է կատարում Վերդիի «Ահրա» և Գունդի «Ֆատաս» օպերաներից: Համերգը կրկնվում է Երևանում:

## ԲԵՌՈՒԻՆՈՎ՝ ՓԱՌԻԶ

1901 թ. նունիսին Կոմիտասը Բեռլինով մեկնում է Փարիզ: Սա նրա առաջին այցն էր Փարիզ: Փարիզը սառնասիրու ու մարդու նկատմամբ անտարբեր Բեռլինը չէ. պատեղ կյանքը եռում է ցերեկ թն զիշեր, մարդիկ ավելի շերմ են, եռանդուն: Դիեն Օքրին իր բարեկամին ծանոթացնում է ինպրեսիոնիզմի հայումի մերկայացուցիչներ Վլոդ Դերյուսի, Մորիս Ռավելի, Անն-Սանսի, ինչպես նաև նույն ուղղությանը պատկանող գեղանկարիչներ Մանեի, Մոնեի, Պիսարոյի և շատ ուրիշների հետ: Այստեղ մեկուկես ամսվա ընթացքում Մարգարիտ Բարպարանն ու Արշակ Չոպանյանն իրենց սիրելի ընկերոջն ու բարեկամին մոտիկից ծանոթացնում են Եվրոպայի այս շքել քաղաքի մշակութային կյանքին ու մշակույթի անվանի գործիչների հետ:

## ՈՐՏԵՂ ԵՐԳ, ԱՅՆՏԵՂ ԿՈՄԻՏԱՍԸԸ

Էջմիածնում աշխատելու հինգ տարիների ընթացքում Կոմիտասը լինում է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ու զյուղերում, հատկապես եկեղեցական տուններին նա լինում է տարբեր եկեղեցիների բակերում, թաքնվում ծառերի ետևու կամ բարձրանում կտորները և զաղոտի ձայնագրում ուխտավորների երգերն ու պարեղանակները: Հայ շինականն այնքան էր ընտելացել իր սիրելի խաղ կանչող վարդապետի ներկայությանը, որ չէր քաշվում նրանցից և ազատ ու անկաշկան կատարում էր նրա խնդրանքը՝ երգել, պարել, գրուցներ ու ավանդություններ պատմել, որպեսզի ինքն այդ բոլորը գրի առներ:

Կոմիտասի երգացանկը մեծապես հարստացրին Հատիճը, Ապարանն ու Գյումրին:

## ԵՐԳԱՀԱՆԴԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ

1905 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսի Արտիստական ըմկերության դահլիճը լեփ-լեցուն էր ոչ միայն տեղի, այլև Ռուսաստանից ու Եվրոպայից Թիֆլիս եկած մտավորակամերով: Եկեւ էին դեռ երկու ամիս առաջ հայտարարված Կոմիտասի՝ 60 հոգանոց երգչախմբի համերգը լսելու: Այն ցնցող տպավորություն է թողնում ունկնդիրների վրա: Համերգը կրկնվում է ապրիլի 3-ին: Համերգից հետո Կոմիտասն ու իր սիրեկի մեներգիչ Վահան Տեր-Առաքելյանը հյուրընկալվում են Թումանյանի բազմանդամ ընտանիքում: «Մեր «Վերնատունը» շատ հյուրեր է ընդունել ու ճամապարհել, բայց Կոմիտասը ոչ թե մեր հյուրն է, այլ մեր աշքի լուսը. այսօր նա մեզ հրայր պարզեց», - ասում է Հ. Թումանյանը:

Հաջորդ օրը Կոմիտասը հայկական երաժշտության մասին Հովհաննյան վարժարանի դահլիճում դասախոսություն է կարդում, որը զուգակցվում է համերգով:

## ՈՒ ԽԵՆԹԱՑԱԾ ԾԱՓ ՏՎԵՑ ՓԱՌԻԶԸ

Կոմիտասը վաղուց եր հրավեր ստացել մասնակցելու փարիզյան Հայկական երգի նվազահանդեսին, որը կազմակերպել էր Արշակ Չոպանյանը: 1906 թ. Կոմիտասն իր երգերը տպագրել տալու համար մեկնում է Բեռլին, այստեղից էլ՝ Փարիզ: Այստեղ նա Ա. Չոպանյանի և Մ. Բարայանի միջոցով հայ և օտարազգի ուսանողներից քառաձայն մի հրաշալի երգչախոսը է պատրաստում, որին մասնակցում էին նաև օպերային երգիչներ, կոմսերվատորիայի ուսանողներ և մեներգիչներ Արմենակ Շահմուրադյանը, Մուղունյանը և Մ. Բարայանը: Վերջինս նույնպես հրաշալի երգիչ էր:

1906 թ. դեկտեմբերի 1-ին Սալ Դե զԱգրիկուլտուրի մեծ սրահում Կոմիտասը փառամելու շքեղության մի համերգ է տալիս: «Ամբողջ հասարակությունը կարծես պապանձվել էր, տպավորությունը անպատմելի էր ...», - գրում է Մ. Բարայանը:

Համերգի վերջում Կլոդ Շերյուին մոտենում է Կոմիտասին, ծնկի գալիս ու ասում:

- Հայր Կոմիտաս, խոնարհում եմ գլուխս Ձեր երաժշտական համեմարդի առաջ:

Ապա դառնալով դահլիճում շունչները պահած ունկնդիրներից՝ անվերապահուեն հայտարարում է.

- Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական էր, որ նա համարվեր աշխարհիս մեծ երաժիշտներից մեկը:

## ՀԱՄԵՐԳԱՀԱՆԴԵՍՆԵՐ ԾՎԵՑՑԱՐԻԱՅՈՒՄ

Փարիզում ունեցած արտակարգ հաջողություններից հետո Կոմիտասը մեծ պատրաստակամությամբ է արձագանքում Փարիզից դուրս հայկական համայնքների խնդրանքին և նույն թվականի մայիսի կեսերից մինչև հուլիսի կեսերը համերգ-դասախոսություններով հանդես է գալիս Ժնևում, Ցյուրիխում, Բեռնում, Լոգա-

նում: Ժմեռում կայացած փառաթիւ համերգի ողջ հասովքը՝ 2000 ֆրամկ, Կոմիտասն ուղարկում է Վանի սովորականին: Համերգին առանձին շուր էր տալիս հրաշալի տենոր Արմենակ Օհանուրադյանը, որին «հայկական Կառուզո» էին կոչում: Մասմակցում էր նաև Ժմեռ համապարանի ուսանող, Կոմիտասի նախկին սան Դերենիկ Դեմիրճյանը:

### «ԽՏԱԼԻԱՆ ԳԵՂԵՑԻԿ Է, ԲԱՅՑ ՄԵՐ ԴԺԲԱԼՍ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՎԵԼԻ ԳԵՂԵՑԻԿ Է!»

Մինչ շվեյցարական մամուլը շարունակում էր գովասանել տաղանդավոր արվատագետին ու հայկական ինքնատիպ երգարվեստը, նայ երգն ու արվեստը մեկ այլ ազգի՝ ավելի երաժշտական ժողովրդի դատին ներկայացնելու նպատակով հայ երգի բովիվն անցնում է Խոտայի:

Ամա և մարզպարտի պես գեղատեսիլ Վեմետիկը՝ ծովահալաց ու զմրովիտուա, իսկ Սուրբ Մարտիրի հրապարակն իսկապես մի ամձեռակերտ թանգարան է բաց երկնքի տակ՝ շրջապատված ճարտարապետական ամրկնելի գլուխդործոցներով:

- Ծիշտ է ասված, որ ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ակատեգ Կոմիտասը: - Մի՞թե այս բոլորը մարդկային մտքի արգասիք են:

- Շատ ճիշտ համեմատություն արեցիք. Հայր Սուրբ, Ձեր երգերն ել Անշյունավորված ճարտարապետական կորողներ են, նույնպես մարդկային մտքի ու հոգու պոռթկումներ ... իսկապես որ Խոտային գեղեցիկ է, այնպես չէ», վարդապետ:

- Այո՛, Խոտային գեղեցիկ է, բայց մեր դժբախտ հայրենիքը ավելի գեղեցիկ է, խոր հոգոց քաշելով ասաց Կոմիտասն, ու մտան իրենց հյուրընկալած հյուրանոց:

### ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԾՆՍԴԱՎԱՅՐ ՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1910 թ. մայիսին Կոմիտասն ուղևորվում է դեպի մանկության բնօրրամ բուժվելու և նոր երգեր գրի առնելու նպատակով: Ծանապարհին նա երկու ամսով մնում է Բաթումով ընկերուց մոտ, կազմավորում ժամանակավոր երգչախումբ, համերգներ տալիս, դասախոսություններ կարդում, շշում նաև մոտակա քաղաքներում գործությունի Մայիսինչառուի, Թամարա, լինում թեյի դաշտերում աշխատողների մոտ, վրացական մի քանի երգեր ձայնագրում, ապա անցնում է Պոլիս, հանդիպում իր դասընկերոջն ու իր սիրելի դաստիարակ Մադարիա արքեպիսկոպոս Օրմանյանին, Ղալաթիոն եկեղեցում Պատարագ մատուցում ու նոր միայն անցնում Քյոթամիհա: Երկու ամիս նա մնում է իր ծննդավայրում, լավ կազդուրվում, նորից երգչախումբ կազմակերպում, համերգներ տալիս տեղի և մոտակա հայկական բնակավայրերում և այդ համերգներից գոյացած 120 կարմիր ոսկին տրամադրում իր քաղաքի եկեղեցուն: Այստեղից Կոմիտասը մնենում է Աքին-Գարամիհար, ապա՝ Էսկիշենիր, ալմութեան՝ Խզմիր, Ատարազար, Բրուսա, ամենուր հայկական եկեղեցիներում Պա-

տարագ մատուցում, համերգներ տալիս և նորանոր երգերով հայրածացած՝ ոտք դնում Պոլիս:

## ՊՈԼԻՍ

Այս խայտարդետ քաղաքում վաղուց ի վեր բնակվում էին հարյուր հազարից ավելի հայեր, որտեղ կային 28 հայկական դպրոցներ և 32 եկեղեցիներ: Կոմիտասն էլ ցանկանում էր կոնսերվատորիա հիմնել: Այդ նպատակով նա հայկական դպրոցներից հավաքագրում է 300 ձայներ երկսեռ աշակերտներ և կազմում մի հզոր երգչախումբ՝ «Գուսան» անունով: Եվ հմտու մանկավարժ ու մեծ երաժիշտ Վարդապետի քրտնաշան աշխատանքը տալիս է իր արդյունքը. կարճ ժամանակից հետո Պոլիսի հայաբնակ թաղերում թնածում է հայ քաղցրահնչուն երգը:

## ԿՈՄԻՏԱՍԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

1911-ի ապրիլի 10-ին Կոմիտաս Հայր Սուրբ Ս. Զատկիմ Քրիստոսի Հարության տոնի առթիվ Կամիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատարագիչն էր: Մայր Հայութեամիրից ալյուստ հեռու ապրող հայերին Կոմիտասը փառավորում է իր երգերով: Այնտեղից նա մեկնում է Ալեքսանդրիա, որտեղ 190 հոգանոց երկսեռ քառաձայն երգչախումբ կազմում ու Եօդիպոսի հայերին ցուց տալիս, որ եթե բուրգերը կանգնած են տեղում, և մարդիկ են գրանց այցի գալիս, ապա հայ երգն ինքն է այցի գնում՝ որտեղ հայ կա՝ աշխարհին ցուց տալով իր հմայքը: Արաբական մամուլը չսկսած ու չգրված խոսքեր գրեց հայ երգի ու գրանց անհման կատարողի մասին. «Հանձին Կոմիտասի ողջունում ենք այն մեծ առաջալին, որով կարող է հապարտանալ ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ողջ Արևելքը», - գրում է «Էլ Վայթան» արաբական թերթը:

## ՎԵՐԱԴԱՐՁ ՊՈԼԻՍ

Պոլսում Կոմիտասն ազգօգուտ գործեր շատ էր անում, բայց Պոլիսը հայերնիք չեղ, այն խորթ ու օտար էր Հայր Սուրբի համար. Արան կանչում էր մայր հողը, իր ժողովուրդը, իր Սոնա յարն ու Ծիրանի ծառը, իր Մայր Տաճարն ու Մասիս սարը, մանավանդ որ խազերի լրիվ վերծանման համար դեռ գործ ուներ անելու Մատենադարանում ու դեռ երգեր ուներ ձայնագրելու և, վերշապես, շատ էր կարոտել իր սահերին ու ընկերներին:

Եվ հետո, վերջին հաշվով, Պոլիսը Կոմիտաս վարդապետի համար ի՞նչ...

## ԵՎ ՆԱ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ...

...Ու նրան լավ չընդունեցին... Գևորգ Հիմզերորդ Կաթողիկոսի այն հարցին, թե «ե՞րբ ես եկալ, ե՞րբ ես զնում», Կոմիտասը պատասխանում է, թե «Այսօր եկա, վաղը կզմա»: Խիստ վիրավորված ու իրեն անշափ վարկաքննված զգալով՝ Կոմիտասը թողմում է իր վիրասուն Մայր Տաճարն ու երկու ամիս շրջում Հայաստանում: Լինում է Ապարանում, Ղարաբիլսասպում, Ծիրակում, Աշտարակում, Կոտայքում, Իգդիրում՝ կարծես իր կարուտ առնելու և վերջին հրամեսող տալու և, 100-ից ավելի նոր երգեր գրի առած, վիրավոր սրտով ու կոտրված հոգով վերադառնում այդ անհրավ ու մարդակեր Պոլիս...

## ՓԱՌԱՏՈՆ ՊՈԼՍՈՒՄ

1913-ի հոկտեմբերի 13-ը անմոռաց կմնա Պոլսի ու դրսից եկած օտարականների նիշշողության մեջ:

Օրեղ տոնահամենաը նվիրված էր նաև գրեթի զուտի 1500 և նաև գրեթ տպագրության 400-ամյակին: Տոնահամենաը նախապատրաստել և դեկապարում էր Կոմիտաս վարդապետը: Իր հոկտեմբերական արվեստով հրաշալի բացման խորքից հետո, որպես օրվա բանախոսի, ամբիոն տրամադրում է նախագահական սեղանի Կենտրոնում նառած Դամիել Վարուժանին: Նրան հաջորդում են մյուս բանախոսները, որոնց խորքն ընդունվում է Սիամանթոյի՝ օրվա տոնին նվիրված «Սուրբ Մաշտոց» ընդարձակ բանաստեղծությունից հատվածներ կարդալով:

Ներկաների համար շատ անակնկալ էր Թալեաթի բնմ բարձրանալը. Անրկաները լավ գիտեին դիվանագետ թուրքերի երկերնամիտությունը... բայց նրա սուսը գոնեն այդ պահին հայոց ուժի վկայությունն էր հաստատում:

Թալեաթից հետո միայն բնմ բարձրացավ ավելի դիվանագետ ու կեղծավոր Զեմալ փաշան: «Այն ժողովուրդը, որ իր սեփական տառն ու մշակույթը չունի,- այսպես սկսեց նա իր խորքը.- չի տարբերվի վայրի ազգերից: Մինչդեռ հայն ահա իր առաջադիմական ոգու անմենքելի ապացուցն է պարզում աշխարհի առաջ: Ցուրաքանչյուր օսմանցու խնդի պարտըն է զնահատել քաղաքակրթության ասպարեզում հայի գրաված բարձր դիրքը...»:

«Հայ մտավորականությունը ցածության մեջ էր, որ թուրքական հայատյաց ուժինի տակ, ներուսարար մաքառելով, կարողացավ կազմակերպել այսպիսի տոնահամենունը»,- գրում է Աղավնի Մեսրոպյանը:

Տոնահամենի համույսավոր մասի դադարից հետո նվազահամենի բացման պատիվը տրվում է Կոմիտասի սիրելի սան, Գրանդ օպերայի անգույզական տենոր Շահմուրայյանին, որը «Գուսան» երգչախմբի հետ հնչեցրեց «Ով մածասքանչ դու լեզու» հրաշալի երգը, որի մեղեղին Կոմիտասը գոնել էր հատկապես այդ օրվա համար: Հնչում են նաև «Հայատան», «Կոունկ», «Մոկաց Միրզա», «Կիլիկիա» և այլ երգեր:

Դամիլինի չորս կողմերից սպիտակ աղավաղմանը են բաց թողնվում: Բևեր զարդարվում է ամբամար ծաղիկներով: Կոմիտասին գրկելու, համբերելու հերթը չեր վերջանում:

## ՓԱՐԻԶԸ ԶԵԼԱՑՐԵՑ ԿՈՄԻՏԱՍԻՆ, ԿՈՄԻՏԱՍՆ ԻՐ ԵՐԳՈՎ ՆՎԱՃԵՑ ՓԱՐԻԶԸ

1914 թ. հունիս: Նորից Միջազգային երաժշտական ըմկերության հերթական համագումար: Համագումարին մասնակցում են բոլոր քաղաքակիրթ երկրներից ավելի քան 400 մասնակիցներ: Մերձավոր Արևելքի երկրներից հրավիրված էր միայն Կոմիտասը՝ իր երկու դասախոսություններով. Կոմիտասի երկու գեկուցումներա ել լսվեցին շատ մեծ հետաքրքրությամբ:

Իր այս հրաշավի դասախոսությունների ու եկեղեցում տված համերգի համար Կոմիտասին շնորհվում է Առաջին կարգի մրցանակ: Նորից հոդվածներ, գովասանքներ, մորանոր հրավերներ... Բայց վայդապետը տուն էր շտապում:

### ԴԱՌՈՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Եղեռնից մեկ ամիս առաջ «Թյուրք-Օչախի» մեջ երիտրութերը մի շքեղ հանդես էին կազմակերպել, որտեղ հրավիրված էր Առաջին կոմիտասը՝ փոքրիկ երգչախմբով: Նշանավոր պաշտոնյան Համտուլլահ Սուլամինի բեր թեմ է հրավիրում Կոմիտասին: Ներկայացնելով Արամ՝ բազմահազար թուրքերի առաջ առում է.

«...Եվ հետո, ճշմարտությունը, որքան ալ դառն ըլլա ան, պետք է խոստովանիլ, որ հայ ազգը դարեր ի վեր մեր մշակութային կյանքին մեջ իր հառաջապահի մասնավոր տեղը ունեցած է. Թուրքին որ կողմն ալ երթաք, Անատոլուի որ անկյունն ալ ըլլաք, հայ միտքը, հայ ստեղծագործ ձեռքը «Բնու եմ» կըսե: Օրինա՞կ կուզեք. Պոլս սովորական պալատները մեյ մեկ գլուխգործոցներ են, հայ ճարտարապետության գեղեցիկ Ամուշներ են: Դեպի երկինք բարձրացող մինարեներ, ուր ամեն օր մուեզգինը Ալլա աքաքը կպոռա, շատերը հայ ստեղծագործ ձեռքերու մեյ մեկ կոթողներ են: Ձեր սիրելիներու տապանաքարերը, որոնք այնքան հրբություն ունեն, նորեն հայ վարպետներու գործեր են: Վասի նշանավոր գեղանաշակ արծաթիա տուփերը, որ օտարականներու անզամ հիացում կազդեն՝ հայ ոսկերչության արտադրությունները են:

Բժշկական համալսարանի հիմնադիրները և գիտական գիրքերու առաջին հեղինակները նորեն հայեր եղած են... թուրք թատրոնը իր գյուղումը հայերուն պարտի...

Այսօր ալ Եվրոպաները հաղթած տաղանդավոր Կոմիտաս-երաժշտագետը ամեն շանք թափում է Պոլսին մեջ առաջին կոմսերվատորիան հիմնել... Փառք ու պատիվ Կոմիտաս վարդապետին: Արա այսպես ուշիմ ու ընդունակ ազգի մը հետ միասին կապրինք, որ միջն հիմա ալ ամեն ազգի մեջ տիրապետող է»:

## ԳԱՐՈՒՆ Ա, ԶՈՒՆ Ա. Ա.ՐԵԼ

Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ նաև ազգին այդպես զնահատող ու նրա բանքարք այդպես արժնորող երկերնեանի ու ստոր ազգն ուղիղ մեկ ամիս նետո ախճիր ու եղերն է կազմակերպում մի շինարար ու իմաստում ազգի նկատմամբ:

...Եվ 1915 թ. ապրիլի 24-ի սկ ու ողբերգական գիշերը մեկ ու կես միլիոն հայերի համար չունեցավ լուսարաց:

Գիշերվա ուշ ժամ էր, Կոմիտասն աշխատում էր մոմի լուսի տակ: Ներս են խուծում երկու ոստիկան, տակնուվրա անում սենյակը, պատառուում ու հատակին շպրտում սուրբ մատուցները և տանում Կոմիտասին (բարերախտաբար Թերլեմնազ-յանը Վան էր զմացել):

...Կենտրոնական բանտի բակում կոմիտասը համդիպեց իր ընկերներին ու բարեկամներին:

217 մտավորականների ու հազարավոր հայ արտօրյալների մեջ էր նաև Կոմիտաս վարդապետը:

Իսկ այդ ճանապարհը վախճան չուներ... Նրանց քշում էին երկու տարբեր ուղղություններվ՝ դեպի Այաշի ու Չանչըրի աքսորավայրերը: Անվերջանալի օրերով ու գիշերներով քշում էին սովահար ու տանջալլով անմեղ ժողովրդին: քշում էին խակորթների հարվածների ու բարի արկի տակ: Ու... ձգվում է հոգնատանց քարավանը...

Գիշերային հոգնաբեկ ոտնաձայները խացնում էր միայն Կոմիտասի լալազին ու դառնաշունչ «Տէր, ողորմեա»-ն.

**Ամենասուրբ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ, ՄՈՒՐ ԱՇԽԱՐԲԻՆ խաղաղություն...**

Հրացանների խզակոթերը լուցնում են վարդապետին: Էլ ի՞նչ Տէր, ի՞նչ Ողորմյա:

...Ու խնճացավ Վարդապետը... Խենթացավ՝ տեսնելով թուրք ենիշերների ահազարիուր, զազանաբար զործողություններն անմեղ ժողովրդի նկատմամբ... Ու այդպես, հոգեկան հավասարակշռությունը կորցրած «ապրեց» 20 տարի:

1916-ի զարնանը Կոմիտասին տեղավորեցին Պոլսի Ծիշի հոգեբուժարանում: Բայց նրան լուրջ, մասնագիտական բուժում էր անհրաժեշտ: Հայ մտավորական-ները «Օգնենք Կոմիտասին» հաճճախումբ կազմակերպեցին, դրամ հավաքեցին, և Կոմիտասը տեղափոխվեց Փարիզ: Դա 1919-ի մարտի 19-ին էր. «Գուսան» կենդանի մնացած անդամներն արտասվախառն աշերով ճանապարհ էին դնում իրենց ուսուցչին:

Եվ Կոմիտասը վերջին անգամ եղավ Փարիզում, բայց այս անգամ «ոչ թե Եվրոպայն փառք բաղեկու, այլ իր ցավին համար դարման մուրալու», - գրում է Հ. Սիրումին:

Ա. Զոպանյանի օգնությամբ Կոմիտասին տեղավորում են Վիլ-Շվայշ հոգեբուժարանում: 1922-ին տեղափոխում են Վիլ-Շուիֆ հոգեբուժարան, որտեղ էլ

1935-ի հոկտեմբերի 21-ին, ժամը 6-ին, կճռում է իր մահկանացում՝ իր սիրասուն ազդից, Մամիսներից ու Արագածից կարոտով:

Կոմիտասն ապրեց 66 տարի, որից 20-ը՝ աշխարհից ու մարդկանցից դառնացած: Թեև հիվանդանոցներում նրան այցելում էին իր բարեկամներն ու սաները, բայց նա շատ հաճախ չէր խոսում և գերադասում էր մենակությունը:

Հոկտեմբերի 27-ին ժամ Գուտոնի հայկական եկեղեցու բակում կատարվում է թաղման շքեղ արարողություն, որից հետո նրա ապակեպատ, զմուկած դագաղն իջեցվում է եկեղեցու նկուղ՝ հարմար առիթով Հայաստան տեղափոխելու:

1936-ի մայիսին Ֆրանսիայից ներգաղթող հայերի հետ հավերժական ճամփորդ վերադարձավ իր հավերժական ու վերջին հանգրվան:

Կոմիտասի դագաղը ուսերից վեր դեպի Պանթեոն էին տանում իսահակյանն ու Զարենցը, Արելյանն ու Թերլեմեզյանը, կառավարությունն ու ժողովուրդը:

Խոնարհվեց հայ երգի հսկա կաղաքացի խորհրդանշելով իր ժողովուրդի դառը ճակատագիրը և անմահացնելով այդ ժողովուրդի՝ դարերից եկած ու դեպի դարերը գնացող անմահ զանձերը: Նա իր ժողովուրդի հետ է հավիտյան հավիտեմից. քանի կա հայ ժողովուրդը, կապրեն նաև նրա երգն ու Կոմիտասը, որովհետև նրա երգը հնչում է հավերժ՝ որպես ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ:

